Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2013 թվականի հունիսի 18-ի
N 148-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյանի համայնքում քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի գործունեության պլանային ստուգման վերաբերյալ

2013 թվականի մայիսի 29-ի

Հայաստանի Հանրապետոիթյան Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 13-ի N 114-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովը հետևյալ կազմով՝ նախագահ Լ. Դավթյան, անդամներ Է. Սիմոնյան, Գ. Հարությունյան, և Հ. Մարտիրոսյան, մասնակցությամբ՝ Ախուրյանի համայնքի ղեկավար Ա. Իգիթյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Լ. Տիգրանյանի 2013 թվականի մայիսի 29-ին Ախուրյանի համայնքում անցկացրեց քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի գործունեության վերաբերյալ պլանային ստուգում:

Ստուգումն անցկացվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 13-ի N 114-Ա որոշմամբ հաստատված N3 հավելվածով սահմանված ստուգման առաջադրանքին համապատասխան:

Ստուգման ենթակա 2012 թվականի մայիսի 29-ից մինչև 2013 թվականի մայիսի 29-ն ընդգրկված ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է կառուցապատման նպատակով հողահատկացման 11 որոշում, որոնցից 10-ը՝ հողամասերը սեփականության իրավունքով փոխանցելու, իսկ 1-ը՝ կառուցապատման իրավունք տրամադրելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրազեկումը իրականացվել է գյուղապետարանի շենքում տեղադրված ցուցատախտակների և լրատվության միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշմամբ հաստատված կարգի համաձայն համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է տարբեր նշանակության 5 օբյեկտների նախագծային փաստաթղթերի համաձայնեցում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1473-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն տրվել է 3 օբյեկտների նախագծման ճարտարապետահատակագծային առաջադրանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգի համաձայն տրվել է 6 օբյեկտների կառուցման շինարարության թույլտվություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել է 3 օբյեկտների ավարտված շինարարության շահագործման փաստագրումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշմամբ հաստատված կարգի համաձայն տրվել է ոչ հիմնական 1 շինության տեղադրման թույլտվություն:

Ինքնակամ շինարարության իրականացման դեպքեր համայնքի ղեկավարի կողմից չեն արձանագրվել:

Ընտրանքային կարգով ստուգվել է 11 գործ:

1. Համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոսի 6-ի N: 56 որոշում, կետ 2՝ բնակելի տան կառուցման նպատակով Ջրաշինարարների փողոցի 5-րդ անցման N:2 հասցեում գտնվող 0.046 հա մակերեսով հողամասն աճուրդում հաղթող ճանաչված քաղ. Լ. Ռոստոմյանին օտարելու մասին:

Գործընթացն իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

2. Համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոսի 6-ի N: 56 որոշում, կետ 6՝ բնակելի մասով առևտրի սրահ կառուցելու նպատակով Ախուրյանի խճ. N: 20/2 հասցեում գտնվող 0.12հա մակերեսով հողամասն աճուրդում հաղթող ճանաչված քաղ. Խ. Պոլադյանին օտարելու մասին:

Գործընթացն իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբերի 4-ի N: 61 որոշում՝ բնակելի տան կառուցման նպատակով Ջրաշինարարների փողոցի 5-րդ անցման N: 5 հասցեում գտնվող 0.059հա մակերեսով հողամասն աճուրդում հաղթող ճանաչված քաղ. Վ. Տոնոյանին օտարելու մասին:

Տարածքի ընդհանուր կառուցապատման սխեման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցվել է համապատասխան մարմինների հետ:

4. Համայնքի ղեկավարի 2013 թվականի մարտի 5-ի N: 17-Ա որոշում՝ ոչ հիմնական շինություն տեղադրելու նպատակով Գյումրու խճուղու N: 29/2 հասցեում գտնվող 0.005 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթում հաղթող ճանաչված քաղ. Ս. Սարգսյանին հատկացնելու մասին:

Փաստաթղթերի փաթեթում բացակայում է հատկացված հողամասի իրադրական հատակագիծը:

Չի ապահովվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2006թ. օգոստոսի 21-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, օգտագործման և կառուցապատման տրամադրելու պայմանագրերի հավելված հանդիսացող հողամասի հատակագծի օրինակելի ձևը սահմանելու մասին>> N06-339-Ն հրամանի N1 հավելվածի պահանջը:

5. Համայնքի ղեկավարի 2013 թվականի մարտի 5-ի N: 18-Ա որոշում՝ անհատական բնակելի տան կառուցման նպատակով Մ. Ավետիսյան փողոցի N: 39 հասցեում գտնվող 0.06հա մակերեսով հողամասն աճուրդում հաղթող ճանաչված քաղ. Է. Մանուկյանին օտարելու մասին:

Գործընթացն իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

6. Համայնքի ղեկավարի 2013 թվականի մայիսի 24-ի N: 57-Ա որոշում՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով Պ. Սևակի փողոցի N: 3/1 հասցեում գտնվող 0.024հա մակերեսով հողամասն աճուրդում հաղթող ճանաչված քաղ. Յու. Գասպարյանին օտարելու մասին:

Փաստաթղթերի փաթեթում բացակայում է հատկացված հողամասի իրադրական հատակագիծը:

Չի ապահովվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2006թ. օգոստոսի 21-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, օգտագործման և կառուցապատման տրամադրելու պայմանագրերի հավելված հանդիսացող հողամասի հատակագծի օրինակելի ձևը սահմանելու մասին>> N06-339-Ն հրամանի N1 հավելվածի պահանջը:

7. Մ. Ավետիսյան փողոցի N 15 հասցեում քաղ. Ս. Գալստյանի կողմից կառուցված անհատական բնակելի տան ավարտված շինարարության շահագործման փաստագրում (ակտ՝ 20.03.2013թ. N1):

Գործընթացն իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

8. Կառնուտի խճուղու N 28/1 հասցեում քաղ. Հ. Իգիթյանի կողմից կառուցված առևտրի և սպասարկման օբյեկտի ավարտված շինարարության շահագործման փաստագրում (ակտ՝ 13.05.2013թ. N2):

Գործընթացն իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

9. Կառնուտի խճուղու N 21 հասցեում քաղ. Ն. Մինասյանի հողամասի պարսպի կառուցման աշխատանքային նախագիծ.

ա) նախագիծը մշակված է <<Երանգ>> ՍՊԸ-ի կողմից,

բ) ՃՀԱ՝ տրված 10.09.2012թ.N15,

գ) շինարարության թույլտվություն՝ տրված 18.09.2012թ.N03,

Առկա փաստաթղթերը համապատասխանում են նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

10. Նախատեսված ավտոտնակների շարքում Ջրաշինարարների փողոցի N 1/3 հասցեի հողամասում քաղ. Ա. Հովհաննիսյանի ավտոտնակի և արհեստանոցի կառուցման նախագիծ.

ա) նախագիծը մշակված է <<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ-ի կողմից,

բ) ՃՀԱ՝ տրված 09.04.2012թ.N01,

գ) շինարարության թույլտվություն՝ տրված 13.04.2013թ.N 02

Ըստ փաստաթղթերում առկա սխեմայի տարածքում նախատեսվում է կառուցել ավտոտնակներ 2 շարքով, որոնց միջև հեռավորությունը պետք է կազմի 5.0մ:

Ըստ կառուցապատման սխեմայի չի ապահովվում ավտոտնակների 2 շարքերի միջև <<Քաղաքաշինություն>> ՍՆԻՊ 2.07.01-89-ի N 1 հավելվածի նորմատիվային պահանջները:

11. Նախատեսված ավտոտնակների շարքում Ջրաշինարարների փողոցի N 1/8 հասցի հողամասում քաղ. Թ. Մկրտչյանի ավտոտնակի կառուցման նախագիծ.

ա) նախագիծը մշակված է <<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ-ի կողմից,

բ) ՃՀԱ՝ տրված 09.04.2012թ. N02,

գ) շինարարության թույլտվություն՝ տրված 17.04.2013թ.N 03,

Ըստ փաստաթղթերում առկա սխեմայի տարածքում նախատեսվում է կառուցել ավտոտնակներ 2 շարքով, որոնց միջև հեռավորությունը պետք է կազմի 5.0մ:

Ըստ կառուցապատման սխեմայի չի ապահովում ավտոտնակների 2 շարքերի միջև <<Քաղաքաշինություն>> ՍՆԻՊ 2.07.01-89-ի N 1 հավելվածի նորմատիվային պահանջները:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Դավթյան

Է. Սիմոնյան

Անդամներ՝ Գ. Հարությունյան

Հ. Մարտիրոսյան